ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

14-ը ապրիլի 2021թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-05

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՁԵՎԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1.-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ մրցութային խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի մասնակցի գնահատման հարցաթերթի ձևը, գնահատման ենթակա չափանիշները և գնահատման միավորները՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ԼԻԱՆԱ ՂԱԼԹԱՂՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՐԻՆԱ ՓԻԼՈՅԱՆ

Հավելված

Մրցութային խորհրդի

2021թ. ապրիլի 14-ի

Թիվ ՄԽ-Ո- 05 որոշման

Հարցաթերթ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասնակցի
_____ հարցազրույցի փուլի
(անունը, ազգանունը)

h/h	Գնահատման ոլորտը	Գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշներ	Գնահատման առավելագույն միավորները	Թեկնածուի գնահատման միավորը	Նշումներ
1.	**Մասնագիտական փորձ, անձնական որակներ և հմտություններ**				
1.1	Մասնագիտական աշխատանքի փորձառությունը	• Թեկնածուի նախկինում իրականացրած աշխատանքների վերաբերելիությունը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի լիազորություններին. • Մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետը. • Ղեկավարման/կառավարման հմտությունները. • Նախաձեռնողականությունը.	15		

		• Թիմային աշխատանքի ունակությունները:			
1.2	Հանձնաժողովի անդամ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը	• Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն • Օրենսդրական մակարդակում և գործնականում Հանձնաժողովի գործունեության առնչությամբ առկա խնդիրներին տեղեկացված լինելը և դրանց շտկմանն ուղղված քայլեր իրականացնելու տեսլականի առկայությունը և ունակությունը. • Պաշտոնում ընտրվելու դեպքում,ապագա ծրագրերն ու մտադրությունները. • Քաղաքական չեզոքությունը. • Հետաքրքրությունն՝ ապագա մասնագիտական գործունեության նկատմամբ:	5		
1.3	Բարեվարքություն	• Թեկնածուի բարոյական սկզբունքները. • Գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին. • Շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողությունը. • Անօրինականության մասին ազդարարելու պատրաստակամությունը. • Էթիկայի կանոններին տիրապետելը.	10		

		• Արդարամտությունը:			
1.4	Վարվեցողություն	• Թեկնածուի վարքը և վարվելակերպը. • Խոսելառճը ու ձայնի տոնայնությունը, շարժումները. • Դիմիացինի նկատմամբ հարգալիրությունը. • Զսպվածությունը. • Սեփական զգացմունքները կառավարելու ունակությունն ու ինքնատիրապետումը:	5		
1.5.	Հաղորդակցվելու հմտությունները	• Թեկնածուի՝ հարցեր լսելու կարողությունը. • Սիրալիրությունը. • Տրված հարցերին պատասխանելու ունակությունը. • Անկաշկանդ շփվելու կարողությունը. • Վստահություն ներշնչելը. • Ազատ արտահայտվելու և հստակ մտքերը շարադրելու ունակությունը. • Միջավայրին արագ հարմարվելու ունակությունը. • Անկեղծությունը:	5		
1.6.	Վերլուծական կարողությունները	• Տեղեկատվության արագ ու ճիշտ ընկալումը. • Ստացված տեղեկատվության զտման արդյունքում անհրաժեշտ տվյալների առանձնացումը. • Տեղեկատվությունն օբյեկտիվորեն վերլուծելն ու դրա վերաբերյալ	5		

		կարծիք արտահայտելը. ● Նոր առաջարկություններով հանդես գալը. ● Տվյալներ համադրելու, համեմատական վերլուծություններ անելու կարողությունը ● Միաժամանակ տարաբնույթ գործերում առաջնահերթությունները սահմանելու կարողությունը.			
1.7.	Հանպատրաստից կողմնորոշվելու կարողությունը	● Սթրեսակայունությունը. ● Ճնշման տակ աշխատելու կարողությունը. ● Հարցերին արագ և պատշաճ պատասխանելու ունակությունը. ● Նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակությունը	5		
1.8.	Պատասխանատվության զգացումը	● Սեփական սխալներն ու թերություններն ընդունելն ու դրանց մասին բարձրաձայնելը. ● Թեկնածուի պատկերացումները պատասխանատվության մասին. ● Ճշտապահությունը. ● Կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամությունը. ● Հետևողականությունը ● Սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը:	5		
1.9.	Հեղինակության (ազդեցության)	● Չափավոր ինքնավստահությունը ● Դիմացինի և սեփական մասնագիտական	5		

	չափավոր կիրառումը	կարողությունների ճիշտ գնահատումն ու աշխատանքի և պարտականությունների արդար բաժանումը. ● Թիմում աշխատելու կարողությունը. ● Զբաղեցրած աշխատանքից դուրս պաշտոնը չգործարկելը. ● Ազնվությունը. ● Բարյացակամությունը			
	1-ին կետի ենթակետերի միավորների հանրագումարը՝		60		
2.	**Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացություն**				
2.1.	Մասնագիտական հարց 1		20		
2.2.	Մասնագիտական հարց 2		20		
	2-րդ կետի ենթակետերի միավորների հանրագումարը՝		40		
	Ընդամենը՝(բոլոր ենթակետերի միավորների հանրագումարը)՝		100		